

կանխակալ կասկածանացն եւ վաղեմի ոխութեանն, կամ առ դրակցութեան սահմանաց Լամբրունեցոյն ընդ սուլտանին Իկոնիոյ, որում բարեկամ եւ նիզակակից եղեալ էր հօր նորա Օշնի՝ ընդդէմ Ռուբինեանց, եւ զայս իսկ ասեն պատճառս՝ պատմիչն արքունի եւ Կիրակոս. եւ վասն այսորիկ, (ըստ առաջնոյն բանի), «Խորհէր Լեւոն իմաստութեամբ փետտել զթեւս նոցա, եւ ցածուցանել զբարձրայօն հպարտութիւն նոցա»: Ոչ է մեզ յայտ ո՛րչափ ինչ էր բարձրայօնակ հպարտութիւնն Հեթմոյ, կամ ո՛րչափ ստոյգ ապստամբել նորա ՚ի Լեւոնէ, որպէս Կիրակոս ասէ, եւ յաւելու, եթէ սորա «բազում անգամ ջանացեալ՝ ոչ կարէր նուաճել զապստամբն». եւ ոչ մանաւանդ զամուր զբերդն՝ յոր ապաստանեալ կայր, եւ երկար պաշարման ոչ ներէին բազմապատիկ հոգք թագաւորութեանն. խորհեցաւ «ապա յետոյ խորամանկութեամբ խաբել զնա՝ ինամութեան աղագաւ». եւ «խօսէր ընդ Հեթում բանս ախորժականս մտաց նորա. Կամք են իմ առնել ընդ քեզ կապակցութիւն սիրոյ. եւ տալ զդուստր եղբօր իմոյ Ռովբինի՝ զՖիլիպն՝ ՚ի կնութիւն որդւոյ քո երիցագունի՝ Օշնի. եւ Հեթում շնորհակալութեամբ ընկալաւ զբանն, եւ ուրախացաւ. եւ ապա ՚ի քաղաքն Տարսոն պատրաստեցին զպէտս հարսանեաց. եւ Հեթում եկն տամբ եւ զաւակօք եւ ամենայն աղխիւք ՚ի Տարսոն: Եւ թագաւորն Լեւոն կալաւ զնոսա. եւ առաքեալ էառ զԼամբրունն, առանց մարտի». այլ ոչ եւ առանց ահարկութեան, զի կային ՚ի նմա ոմանք յորդոց Հեթմոյ, թերեւս կրսերքն, եւ լուեալ զի հայր իւրեանց եւ եղբարքն կալեալ եղեն ՚ի Լեւոնէ եւ ՚ի բանտ եւս արկեալք, յանձն առին յազատութիւն նոցին՝ մատնել զամրոցն. զոր առեալ Լեւոնի՝ գրեաց յարքունիս, եւ ետ մօր իւրում Ռիթայ տիկնաց տիկնոջ, երդուեալ, կամ (ըստ Կիրակոսի) «գրեաց նզովս՝ ոչ եւս այլ տալ զնա իշխանի ումեք, բայց միայն արքունի լիցի. զի հանապազ, ասէ, տեարք նորա ապստամբք են լեալ վասն ամրութեանն»: Ապա արձակեաց զՀեթում «՚ի բանտէն, ետ նմա գեղորայս բազումս, եւ պատուով ընդունէր զնա. եւ նա ծառայէր նմա միամտութեամբ, ըստ իմաստութեան իւրոյ»:- Դիւրին էր թերեւս զրկելոյն միամտել, քան զրկողին չերկմտել. ոչ հանգեան միտք Լեւոնի ՚ի Հեթում, թուի իմն եթէ առ խղճին իւրոյ՝ քան նորա անզգոյշ ինչ գնացից. եւ ահա յետ սակաւ ամաց (թուի ՚ի 1202), վերստին ետ ունել զՀեթում եւ արգելուլ յամուրն Վահկայ: Լուեալ զայս ՚ի հեռուստ քեռւոյ սորին՝ ծերունի կաթողիկոսին Գրիգորի Ապիրատի, ել ՚ի Հռոմկլայէ, եւ հասեալ